ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 6.12. 2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
8. Ա. Մկրտչյան ՝ ռազմական ամբիոնի պետ,
9. Լ. Մարտիրոսյան ՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
13. Ա. Հովհաննիսյան ՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ժորա Ամազարյանի կողմից քննությունները վաղաժամկետ հանձնելու մասին

Հաղ.՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյան

2. ՇՊՀ-ի աշխատողների պարգևավճարի մասին

Հաղ՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ժորա Ամազարյանի կողմից քննությունները վաղաժամկետ հանձնելու մասին

Տիկին Մարդոյանը ներկայացրեց, որ Շիրակի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի կողմից համալսարանի ռեկտորին ուղղված նամակում տեղեկացվում է, որ մանկավարժության ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, պրոֆեսիոնալ բռնցքամարտի «WBO» վարկածով աշխարհի չեմպիոն Ժորա Համազարյանը 2019թ.-ի օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 30-ը ԱՄՆ-ի Լոս-Անջելես քաղաքում նախապատրաստվելու և մասնակցելու է նույն վարկածով աշխարհի չեմպիոնության տիտղոսը պաշտպանելու համար: Ֆեդերացիան խնդրում է Ժորա Համազարյանի վերը նշված բացակայությունները համարել հարգելի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով Շիրակի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի համալսարանի ռեկտորին ուղղված նամակը ՝ հանձնարարել մանկավարժության ֆակուլտետի դեկանին կազմելու անհատական ժամանակացույց, ըստ որի Ժորա Համազարյանին թույլատրել վաղաժամկետ հանձնելու քննություններ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի աշխատողների պարգևավճարի մասին

Հաղ՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՇՊՀ հիմնադրամի բոլոր աշխատողներին, բացառությամբ համատեղության կարգով աշխատողների, տրամադրել պարգևավճար ամսական աշխատավարձի չափով, ըստ հաստատված հաստիքացուցակի:

2. Դոնապան-գիշերապահներին պարգևավճար տրամադրել 70 հազար (յոթանասուն) ՀՀ դրամի չափով:

3. Հիմնադրամի այն աշխատողներին, որոնք աշխատանքի են ընդունվել 2019 թվականին կամ գտնվել են երեխայի խնամքի արձակուրդում, պարգևավճարը տրամադրել փաստացի աշխատած ամիսների համամասնությամբ կատարված հաշվարկով:

4. Առաջարկել ռեկտորի ԺՊ-ին՝ հանձնարարել ՇՊՀ հիմնադրամի ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնին՝ ապահովելու պարգևավճարների հաշվարկը և վճարումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ՝	Լ. Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան